ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 649 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 764-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Ջինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՎՀՀ՝ 00904586) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2020 թվականի դեկտեմբերի 7-ի «Ջինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնի հիմնանորոգում, վերազինում և կահավորում» ծրագրի մասին N 764-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ռաֆ Ֆլոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01548296) 2022 թվականի օգոստոսի 8-ին կնքված՝ N Ռ/080822/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,044,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ռաֆ Ֆլոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01548296) 2022 թվականի օգոստոսի 8-ին կնքված՝ N Ռ/080822 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հատակի, պատերի պոլիվինիլքլորիդ ծածկույթի և դռների ձեռքբերման ու տեղադրման աշխատանքների իրականացում՝ 6,566,400 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան

09.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ